



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ե. — ՇՐՋԱՆ ԺՁ.

1883

ՏԱՐԻ ԺՁ. ՄԱՅԻՍ 31

ՈՒՐԻՇՆԵՐԻ ՀԵՏ ԶԿԱՌԱՎԱՐՈՒՈՂ ՄԱՐԴԸ.

Աստուծոյ ընտրածների, սուրբերի ու սիրելիների պէս՝ հազէք այժմ գուճը, որդւորութիւնը, բաղարկութիւնը, խոնարհութիւնը, հեղուկութիւնն ու երկայնամտութիւնը՝

Մինը միւսին համբերելով ձեր մէջը՝ ներելով, եթէ որ միմեկը քորքոր դէմ տրտունջ ունենայ, ինչպէս որ Քրիստոս ձեզ ներեց, այնպէս եւս դուք մին մինի՝ (ներեցէ՛ւ), բայց ամէն բանից աւելի հազէք սէրը, որ կատարելութեան կա՛պն է։

Աստուծոյ խաղաղութիւնը Թաղաւորի ձեր սրտերումը։

Մարդո՛ւ զարմանումէ թէ՛ ինչ նեղութիւններ են շատ անգամ իրանց տալի մարդիկը, որ երկու կողմիցն եւս մին մինի կեանքն որչափ կարելի է՝ դառնացնեն։

Կան մարդիկ որո՛ւ ինչ ուղղումէ լինի, ոչ մի բանով դո՛հ չեն, ու ոչ մի մարդի հետ կառաւարդուիլ չեն կարող, թէեւ իրանց հետ շատ բարի է, իրանց զիջանող եւս է։ Միշտ բան կգտնեն չհաւանելու, դժգոհ լինելու, կռիւ գցելու, վատ տեսելու, յանդիմանութիւններ անելու եւ սերիշների վերայ գանգատ անելու։ Միշտ առաջուայ բարեկամներից երես են դարձնում, նոր նոր բարեկամներ իրանց համար գտնում, կարծես, իրանց բնութիւնին աւելի յարմար մարդիկ, բայց՝ շատ չէ քաշում՝ դորանց եւս լաւ մարդիկ չեն տեսնում, դորանց հետ եւս աւերիւմեն։ Ոչ մի

տեղ իրանց դիւր չէ գալի. ամեն մի տեղ մի բան ընդգէմ է թվում. ամեն տեղ եւս մի բան պէտք է փոխուի իրանց դատողութիւնովը, երբեմն կարգադրութիւնները լաւ չեն, երբեմն՝ մարդիկը, որոց հետ նիստ ու կաց, կամ գործ պէտք է ունենան: Ոչ ոքին եւս հաւան չեն, ոչ ոքից եւս շնորհակալ չեն:

Այսպիսի անընկերական բնութիւն ունեցող խորթաբարոյ մարդիկն իրանց ունեցած պակասութիւնների հետը կարող են ունենալ եւ սիրելու արժանի յատկութիւնների, եւ այս պատճառաւ առաջին անգամից շատ սիրելի են լինում, պատիւ գտնում, բարեկամներ ունենում, քանի որ դեռ իրանց լաւ չեն ճանաչել: Այս եւս պէտք է ասել, որ այս տեսակ մարդիկը սովորութիւն ունին, որ ծածկում են իրանց բան, մարդ չհաւանող, ուրիշների գլխին տէր դառնալ, նորանց հրամայել սիրող բնութիւնը, իրը որ դեռ նոր են բարեկամանալ սկսում: Շատ քաղաքավարի ու քաղցր են վարվում, զիջանող, ներողամիտ, կառավարուող են իրանց ցոյց տալիս, ամեն կերպով ուշադրութիւն են դարձնում իրանց նոր գտած բարեկամների վերայ՝ ու շատ պատուով են հետները նստում, վեր կենում, նոքա աշխատում են, որ իրանց հաւանին՝ մի կողմանէ նորա՝ համար, որ կարծում են թէ՝ ուրիշներն իրանց սրտի իսկ ուզած մարդիկն են. իսկ միւս կողմից լաւ են վարվում այն մտքով, որ իրանց ընտանեացին, որոց հետ վատ են կառավարվում, ցոյց տան, որ իրանք՝ էն գլխից վատ բնութեան տէր մարդիկ չեն, այլ նորանց վատութիւնից ստիպուած են եղել լաւ չվարուելու: Բայց՝ հէնց որ նոր բարեկամութեան առաջին անգամների քաղորութիւնը անց է կենում, հէնց որ մօտիկ բարեկամութիւն է ընկնում մէջներն ու այնուհետեւ առանց քաշուելու խօսակցութիւններ են լինում, չկառավարուող, մարդի հետ չբարիշող իրանց բնութիւնն իսկոյն մէջ տեղ է դուրս գալի, յայտնվում. էլի այն է լինում, ինչ որ առաջ ուրիշների հետ եղել էր: Էլի սկսումէ ասել, որ բոլորը ծուռ են, կամ չեն հասկանում, իրան պէտք է լսեն, իրան ասածն անպատճառ անեն, բանը վերջանումէ նորանով, որ բարեկամութիւնը քանդվումէ, կտրվումէ այն կապը, որ ինչքան սրտանց աշխատութիւնով էր գլուխ բերել, որ կարողացել էր կապել իւր իւր հետ այդ նոր բարեկամներին. հիմա բոլորը զուր գնաց, կորցրեց, վերջացաւ:

Այս տեսակ օտարոտի բնութիւնն՝ որ մի մարդի գովելի յատկութիւնների նշանակութիւնը կորցնումէ, որչափ եւս շատ լաւ ու ամեն մարդի յատկութիւններիցը գերազանց անգամ լինին, յառաջ է գալի նորանից որ, այդ տեսակ բնութիւն ունեցող մարդը շատ մեծ մեծ արժանաւորութիւնների տէր է ճանաչում իրան, ուրեմն եւ հպարտ է, իրան շատ բարձր է պահում եւ ուրիշներին մարդատեղ չէ դնում: Եթէ որ մի քիչ համեստութիւն ունենար, իւր խորթարարոյ եւ չկառավարուող բնութիւնը դէն կգնէր, ամենից աւելի կառավարուող բնութիւն ունեցող մարդը կգառնար: Բայց նա կարծումէ, որ ամեն բան ինքն է լաւ հասկանում, ինքը լաւ գիտէ, սորա համար եւս, եթէ մինն իւր ասածիցը տարբեր է խօսում, իրան ընդդէմ թուելու մի բան է ասած լինում, իսկոյն տաքանումէ: Նա չէ ընդունում, բանի տեղ չէ համարում, ինչ որ իրանից չէ դուրս եկել. ամեն մի՝ թէ՛ մեծ՝ թէ՛ փոքր նշանակութիւն ունեցող բանի վրայ այնպիսի դատողութիւն է տալի, ինչպէս որ մի բան սուր դանակով կտրես, պրծնես. ուզո՞ւմ է իւր ասածը լինի թէ՛ եւ գիտէ, որ ուրիշների սիրտը շատ պիտի ցաւեցնի: Երբ որ նեղանումէ, էլ մտիկ չէ տալի թէ՛ իրան կապեն կամ չեն ատիլ. նորա մտքիցն այն է անց կենում, որ ամենից գերազանց, ամենի վրայ իշխանութիւն բանեցնելու իրաւունք ունեցող մարդն ինքն է, ո՞ւմ ձեռքից ինչ կգայ իրան անելու, ինքն կասի էլ՝ կանի էլ՝ ամեն բանի տակիցն էլ դուրս կգայ, ոչ ոք իրան աչքիդ վրայ ունք կայ ասել չէ կարող:

Մի մարդի այդպիսի պակասաւոր մտածմունք ունենալու պատճառն, սովորաբար ծնողքն են, որ էն գլխից՝ պատիկութիւնիցն այդպէս են մեծացնում, երեխայի խօսքը չեն կոտորում, կամ քովն են գնում, երես են տալիս: Մնողաց այս կոյր ու անխելք սէրն երեխայի բնութիւնը փչացնումէ, միշտ երես տուած մեծանալով. նա հրամայող բնութիւն է ստանում, ուզումէ, որ միշտ ասածը լինի, որովհետեւ մեծ սրտի տէր է դառնում, իրան մեծ բանի տեղ է դնում ու պահանջումէ, որ իւր թանին ոչ ոք թըթու չասի, ամենքն իւր կամքովը շարժին: Իւր ասածն անելու համար, ամեն բանից եւս ձեռք կքալի, որքան եւս իւր սրտի սիրած բանը լինի, չի փոխուելի, չկակղիլ. ամեն բանից կզրկուի, մէայն թէ յաշիւ իւր ուզածն յառաջ տանի: Այս տեսակ մե-

Ծանալուց յառաջ եկած հակումն, որ ունեցող մարդն իւր միտքումն հաստատ այնպէս է դրել, որ ամեն բան միայն ինքն ամենից լաւ գիտէ, ուրիշների խելքը ինչի՞ է հասնում որ, ուրեմն եւ իրաւունք միայն ինքն ունի որ եւ իցէ բանի մէջ, ամենքն էլ ծուռ են, անգէտ են, որովհետեւ խելքները բան չէ կորուսւմ, միայն ինքն է, որ խելքի բուն է: Այս տեսակ հակումն յառաջ է գալի նաեւ վատ կրթութիւնից ուրիշ կերպով էլ. ի՞նչպէս: Նրբ որ երեխայի հետ շատ խստութիւնով են վարւում, կամ սառը կերպով ու կոշտութիւնով, շատ անգամ եւս անարդար կերպով, այն ժամանակ նա համոզուած է լինում, որ իւր դաստիարակներն անարդար են, լաւ հոգոյ տէր չեն, եւ թէեւ ձայն չհանելով, տանումէ նորանց վատ վարմունքը, բայց իւր համար սովորութիւն է դառնում կասկածելն, որ ուրիշներն եւս միտք ու սիրտ ունին. այնուհետեւ էլ ոչ միայն չէ հաւատում նորանց, այլ եւ այն գաղափարն ու համոզմունքն կազմում իւր համար, որ ինքն է ուղիղ, եւ երբ որ մեծանումէ ու այն տարիքին հասնում, որ ինքն է դառնում իւր գլխի տէրը, նոյն խստութիւններն է բանեցնում, նոյն կոշտութիւններն ու անարդարութիւններն ուրիշների հետ անում, ինչ որ իրան արել էին փոքր ժամանակն: Նոյնպէս եւ այն մարդիկ, որ մինչեւ իրանց մեծանալը շատ նեղութիւններ, շատ դառն օրեր են քաշել իրանցից մեծերի ձեռքը, բայց իրեանց աշխատութիւնովը մարդի կարգ են մտել, այդ տեսակ մարդիկ եւս շատ հեշտ կարող են իրանց չափը չբանաչել կամ կորցնել, իրանց ամանիցը դուրս գալ, հպարտանալ շատ անտանելի մարդիկ լինել, ոչ ոքի հետ չուզենալ կառավարուիլ. պատճառն ի՞նչ է. այն, որ իրանց գլխին դրած են, որ միայն իրանց խելքից, իրանց ունեցած արժանաւորութիւններիցն էր, որ այդքան տեղ բարձրացան ու այդ պատուի տէրն են դարձել:

Այս տեսակ մարդիկը միշտ սխալմունքի մէջ են, աշխարհիս մարդոց վրայ ուրիշ աչքով են մտիկ տալի, կամ իրանց աչքովն են նորանց տեսնում. ոչ միայն այն կողմանէ, որ այդ տեսակ իրանց վրայ սիրահարուած՝ անձնամոլ մարդիկն երեւակայումեն, կամ ինչպէս ասում են, մեծ մեծ երազներ են տեսնում, թէ ի՞նչ, թէ ուրիշներն իրանց ունեցած միւս արժանաւորութիւնների համար՝ ոչ միայն սիրով պիտի տանեն իրանց մի քանի թոյլ

կողմերն, թէեւ անկարգ վարմունքն ու գործը, թէեւ անյարմար, անպատշաճ ու կոշտ խօսքերը, երբեմն եւս յանկարծ բարկութիւնն ու կրակի դառնալը. այլ եւ պահանջումն, որ ամեն մարդ եւս միայն իրանց խելքին հնազանդի, կամ ինչպէս իրանք են մտածում, որ միայն ուղիղն է, նորանք եւս նոյնպէս մտածեն, կեանքի բաներն իրանց աչքովը տեսնեն. եթէ այդպէս չանեն ու իրան, ջրովը չգնան իրանց հետն, ամեն անգամ եւս պիտի լինին անխելք, կարճամիտ ու անարգ սրտի տէր մարդիկ:

Դժուար կառավարելու բնութիւն ունենալը կարող է եւ մտրմնաւոր հիւանդոտ գրութիւնից յառաջ գալ: Տաք բնութեան տէր մարդը մի փոքր բանով կեանքիցն էլ զզվում է, ոչ մի բան դիւր չէ գալի, իրան ընդդէմ է գալի ու նեղանումէ, երբ մի որ եւ իցէ խօսք են իրան ասում, թէեւ շատ կակուղ կերպով, ամեն մի ոչինչ բանի վրայ բարկանումէ: Ամեն բան, ամեն խօսք նորա համար այնպէս չէ, ծուռ է սխալ է, ծանր է թշուա՜մ իրան, սրտին կպչումէ: Սիրտը վրան չեղող ու դժգոհ մարդի սիրտը, կարծես, այն ժամանակն է տեղն ընկնում միայն, երբ որ մի բան է գտնում, որ պատճառ է կարողանում բռնել իւր մաղձը թափելու, որքան որ ուզի: Մի միայն երբ որ իւր համար բոլորովին նոր հանգամանքների մէջ է լինում, ինքն իրան, կարծես, մի քիչ մոռանումէ, որովհետեւ հոգին զուարթանումէ ու յալթո մէ մարմնի տկարութեանը, այն ժամանակ տեսնումես, որ էլ այն մարդը չէ, փոխուեց, մի ուրախ սիրտ ունեցող ու քաղցր մարդ է դարձել:

Բնութեան վատութիւնը այսպիսի դիպուածների մէջ աւելի հեշտ է բժկելը. բայց երբ որ մարդս իւր համար վատ սովորութիւն է արել, որ միշտ տխուր բաներ է մտածում, ուրախութիւնից հեռու է մնում, միշտ մութն է, ծիծաղ չէ գալիս երեսը, այդտեղ այնչափ դիւրին չէ նորա փոխուելը: Մարմնի տկարութիւնից յառաջ եկած սրտի տխրութիւնը, դժգոհութիւնը՝ շատ անգամ փարատւումէ, երբ որ առողջութիւնը դարձեալ վրան է գալի, տարիքն առնելով եւս մարդս դէպ իլաւն է փոխվում. բայց հաւատաշն անգամ դժուար է, թէ ինչպէս իւր անտանելի դրութիւնից լաւ ազատւումէ մարդ այն ժամանակ, երբ որ իւր հոգոյ զօրութիւնն է բան տեսնում: Ինչու որ, երբ որ համոզուած ենք լինում, որ տխրութիւնից ամենեւին աւք

չբացանելը մեր՝ ուրիշ պատճառից չէ՝ միայն մեր ջղերի ներգործութիւնիցն է՝ այն ժամանակ մարդիս բանական հոգին կարող է շատ բան տեսնել՝ թէեւ զօրով ինքն իրան չուրախացնիլ, բայց իւր նեղ ու դժգոհ սրտի անախորժ խօսքերից կզգուշանայ: Իւր ազնիւ հպարտութեանը կհարցնի ու ասել կտայ թէ՛ իւր տկար մարմնի գերի՛ն է ուզում լինել՝ թէ իշխողը: Լիւր իսկ զգացմունքը կզգուշացնի իրան անբաղդութեան մէջ՝ ինքն իրան չկորցնել, ու ինչ բանից որ փախչել չենք կարող ու պիտի լինի, համբերութիւնով տանել:

Շատ աւելի դժուար է միշտ՝ մի տկար հոգի բժշկելը, քան թէ տկար մարմինը: Հոգին, երբ որ ողորդ ուզումէ՝ ինչ հանգամանքներ եւս որ լինին, մի իշխանութիւն ունենումէ մարմնի վերայ: Բայց մեղքի մէջ իւր արժանաւորութիւնը կորցրած, աւերուած, վատացած հոգին, որ ինքն իրան պիտի բժշկի, շատ անգամ այնքան կորած, մոլորած վիճակի մէջ է, որ ոչ հասկանալի է ուզում իւր ողորմելի դրութիւնն եւ ոչ բժշկել: Հոգոյ որ եւ իյէ պակասաւոր կողմն իւր համար քաղցկեղի նման մի ցաւ է, որ քանի գնումէ՝ փռւում եւ ուտում իրան:

Ու որ իւր ինքնահաւանութիւնն իւր համար սովորութիւն է շինել, որ ամեն տեղ իւր խօսքն առաջ լինի, միայն իւր ասածն հալած իւղի տեղ ընդունւի: Ինչ որ իւր մտքին, իւր դատողութեանը համաձայն չէ, ամենեւին չընդունի. հրապարակաւ իւր դժգոհութիւնը ցոյց տայ այն կարգադրութիւնների դէմն, որ իւր խելքին չեն գալի, կամ իւր խելքի կտրածի պէս չեն եղած. պստիկ բաների համար ծանօթների սրտանց բարեկամների հետ կռուի, սիրտները սպառնիկ ցաւացնի ու իրանից բոլորովին կտրի, այդ տեսակ մարդն իւր բոլոր կեանքի մէջ անբաղդ կմնայ ու բարեկամ ամենեւին չունենալ: Որչափ որ աշխարհքը նորան քիչ է ականջ անում, այնչափ էլ նա աշխարհի վերայ դառն է խօսում, մարդոց ատիւն ու նորանց բոլորովին արհամարհելն նորա որտի անջնջելի կիրքն է դառնում:

Քանի որ աւելի է զօրանում իւր մէջ կարծիքը թէ՛ իրան ճանաչող, գին դնող չկայ, այնչափ աւելի կասկածաւքով է մտիկ տալի մարդոց վերայ: Քանի որ աւելի է տեսնում, որ ուրիշներն իրանից աւելի են սիրւում, այնչափ աւելի է դառնանում իւր սիրտը մարդոց վերայ ու աչքով տեսնել չէ ուզում նորանց, ու

բոնք պատճառ են: որ իւր սիրտը կրակ է ընկել, այրվում է ու չէ
 հովանում: Սուրբարար այնպէս է բանը, որ մեղքից ուրիշ բան
 չծնի՝ մեղք կծնի. այդ ողորմելին էլ ամեն մեղքի զոհ է դառ-
 նում: «Ազորդ է, որ բարկութիւնը յիմարին կսպանի, ու նա-
 խանձը՝ անմիտ մարդին կմեռցնի», ասաց Եղիմաս Թեմանային
 Յորին, երբ որ սա համբերութիւնից դուրս գալով, ամեն բանի
 վերայ գանգատում էր, ինչ որ իւր չորս կողմը տեսնում էր: (Դիրք
 Յորայ 5. 2.): Նոյն խօսքը՝ տեղն է՝ ու կարծի ասել՝ ոչ ոքի հետ
 չկառավարուող մարդի վերայ: Այդ տեսակ ողորմելի մարդն ա-
 մենի հետ լաւ չէ, բարեկամութիւնը կտրած է, միշտ սորա՝ նո-
 րա հետ քիթով է, ցաւած է, նեղացած է այս՝ այն մարդից,
 մէջներն անհամութիւններ են անց կացած. շատ անգամ իւր
 խելիքից այնպիսի նեղ դրութիւնների մէջ է ընկնում, որ
 սրտին հասնում, մոռլը՝ գլխիցն է դուրս գալիս. միշտ այն
 խելքին է, որ իրան չեն ճանաչում. — այսպիսի տխուր դրու-
 թիւնների մէջ ինքն իրան ձգած լինելով, ինքն իրան ուտում է,
 եւ առանց կամենալու՝ ինքն իրան համար պատրաստում է՝ ինքն
 իրան սպանողի պէս՝ անմխիթար մահ հաւանականակ գերեզ-
 ման: Նորան սպանում է իւր անմիտ նախաձեռնը: — Անկարելի է
 որ նա ուրախութիւն տեսնի իւր օրումը, որովհետեւ ուրիշին
 ոչ տանել գիտէ, ոչ խնայել եւ ոչ համբերութիւն ունի: Յիմար
 մարդն ինքը սիրել չգիտէ, բայց եւ այնպէս ցանկանում է, որ իւր
 վերայ այնպէս սէր ունենան, որ հետը հեղութիւնով ու շատ
 ներողամտութիւնով շարժեն: Նա, որ իւր ամենամօտիկ մարդոց
 ու միջեւ անգամ նորանց չէ ճանաչում ու գին դնում, որոնք
 սրտանց իրան բարի են կամենում, այնպէս է իւր մտքումը
 կարծում, որ ոչ ոք իրան չէ ճանաչում, իւր գլինը չէ իմանում
 ու իւր սրտումը սաստիկ տխրում է ու ցաւում, նա, որ ոչ ոքի
 հետ չէ համաձայնում, պահանջում է, որ ամեն մի մարդ իւր
 կամքովը գնայ: Նա որ՝ ինչ որ ուրիշների վերայ տեսնելով, հա-
 ւանում է, եթէ ինքն եւս մի քիչ կակուղ, վարուող ընութիւն ու-
 նենար, ինչ լաւ կեանք կունենար, ինչ ուրախ ու գոհ սիրտ կու-
 նենար, ինքն իւր ուրախ օրերը սեւացնում է, իւր ինքնահաւա-
 նութիւնովն ու կամապաշտութիւնովն՝ անդադար ինքն իրան
 սիրտը վիրաւորում է՝ խելքը տանել տուած մարդի նման՝ ու յետ-
 նիցն եւս գանգատ է անում թէ՛ մարդիկը չարահոգի են, նեղ

են, խորամանկ են: Նա ինքն, որ իւր ձեռքի տակն եղած մարդոց սիրտն իւր ծանր, կոշտ ու վատ խօսքերով նիրանից սառցնումէ, իսկ իւր մեծաւորներին՝ նոցա սրտին ծանր գալու կերպովն, ինքն իրան բարձր ձեւացնելովն, այնպէս հասկացնելով ամեն կերպ, որ ինքն նոցանից աւելի լաւ է իմանում —, ինքն է վկայում, որ ինքը մի քանի հանգամանքների մէջ անյարմար է, ուր որ պէտք է բանի վրայ ուղիղ ու արդար կերպով մտիկ տալ, որ աշխարհիս հետ կառավարուի: Ինքն է պատճառը, որ իշխն մեղաւոր թող չբռնի, որ իրան՝ տեղիցը դուրս են անում, եւ ուրիշն, որ իրանից պակաս է արժանաւորութիւնովն, յառաջ են քաշում: Իրան՝ իւր տեղիցն արձակումն ոչ թէ նորա համար, որ իրանից ցաւած են ու տեղն ուղղումն՝ հանեն, այլ նորա համար, որ նա թի ուրիշ խելքի տէր է իրան ցոյց տուել ու իրանց բանին պէտք գալու մարդ չէ ճանաչուել: Այբաբացու թիւնը, խելօքութիւնով ուրիշն խնայելը, կառավարուիլը իւր հետ միասին մի գործի, մի պաշտօնի տէր մարդոց հետ, կառավարուիլն իւր հարեւանների (գրացիների) հետ, որոնց հետ միասին պէտք է ապրի իւր չունեցած ուրիշ շատ տեսակ շնորհների տեղն է բռնում ու շատ բան ծածկում, որ աչքի կրնկնէր, եթէ այդ լաւ կողմերը չունենար: Եթէ հարցնես թէ՛ ի՞նչ է պատճառն, որ մի մարդ մի պատուաւոր տեղ է բռնում՝ կեանքի մէջ՝ աշխարհիս մէջ՝ առանց այն պատուաւոր տեղին բոլորովին յարմար լինելու իւր ունեցած արժանաւորութիւններովն, որ նորա մէջ չեն գտնվում, ուրեմն եւ իւր տեղը չէ, կամ անարդարութիւն է, որ նորան այդպիսի տեղ են տուել իւր մի քանի լաւ կողմեր ունենալուն համար — ես քեզ կպատասխանեմ որ՝ ընկերական կամ քաղաքական կեանքի մէջ բանն այնպէս է որ՝ շատ բանի մէջ այն շնորհքը չէ պէտք գալիս, որ աւելի բան հասկանալումն է, այլ աւելի պէտք է գալիս այն շնորհքն, որ բան է գլուխ բերում:

Աւելի վրան ցաւելու մարդ է չկառավարուող բնութեան տէրն իւր տանն, իւր ընտանիքի մէջ ունեցած կեանքովն: Այնտեղ, ուր որ քրիստոնեան իւր տանը մէջ իւր դրախտն է գտնում, ուր որ մարդկային կեանքի անախորժ բաներից, փորձանքներից, ձախորդութիւններից իւր գլուխն է ծածկում, հանգստութիւնը գտնում, ծովի մրրիկներից խաղաղնաւահանդիստը հասած,

աղատուած ճանապարհորդի նման, այդ գրախան, որոյ մէջ պիտի գտնէր անվրդով խաղաղութիւն, պարզութիւն, սէր, ուրտիութիւն, սրտակցութիւն, ուղենալով՝ իւր համար գոփոք է դարձնում: Արովհետեւ ինչ կերպ որ ինքն է վարվում ուրիշների հետ, նոյն կերպով եւս իւր հետն են շարժում. անկարելի է որ, առի՛ ու չորի՛ անի՛ ու իւր առաջը չըգայ. առած է թէ՛ հոգիս կատես, հոգիս կխես, չօւ կասես, չօւ կխես: Ենչպէս որ ինքն ամեն բանի մէջ վատ է տեսւմ, ամեն տեղ, ամենի վրայ բան է պտրում, որ խօսի մարդի հանգստութիւն չէ տալիս սորա՛ նորա սիրտն է պղտորում, այնպէս եւս տանեցիքն իրան հասկացնումն միշտ, որ իւր արարմունքն՝ արարմունք չէ, զո՛ւր տեղն է խօսում, զո՛ւր տեղը տունը տակն ու վրայ անում, չէ թողնում, որ հանգիստ սրտով օր անցկացնեն: Ենչպէս որ ինքը փոքր բանը մեծացնումէ, իւր համար բան շինում, որ ամենին եւս վատ առի՛ իրանիցն է՝ որ բնտանիքն եւս այնտեղ են հասել, որ փոխարէնը՝ իւր արդար բաժինը տալիս են իրան: Այսպէսով եւ ոչ ժամանակ մի տեւողական հանգստութիւն չէ տեսնում, որովհետեւ իւր անտանելի բնութիւնն չէ թողնում ամենեւին, որ իւր տան մարդիկն ուրախութեան հանգստութեան երես տեսնեն:

Կարծիք չկայ, որ այս՝ կամ այն մարդն այս գրածներէն մէջն իւր պատկերն է տեսնում ու՛ վաղուց արդէն՝ հասկացրել է, որ իւր շատ սեւ օրեր անց կացնելու պատճառն ինքն է, ուրիշ ոչ ոք: Կարելի է, որ այդ մարդի կարծիքներն ու դատողութիւնները շատ անգամ ուղիղ են եղել. բայց ծուռն են եղել իւր գործի մէջն, որ ուրիշ կերպ է շարժել, այնպէս չէ արել, ինչպէս որ պէտք էր շարժէր, կամ անէր: Այդպիսի մարդն անխելք չէ՛ ամեն բանն եւս լաւ է հասկանում, բայց այն խելքն ու շնորհքը չունի, որ բանին, տեղին, ժամանակին մտիկ տալով, այնպէս վարուի, որ նորանից լաւ ու յարմար գոուար կարելի լինի շարժելու: Մեծ բան պակաս է եղել այսպիսի մարդին: Աստուծոյ ու մարդոց վրայ ինչ կերպ պէտք է մտածի քրիստոնէական հաւատի զօրութիւնովն, այդ բանը նորան մօտ չէ գտնուել, քրիստոնէական մտածման այդ հաստատ հիմն չէ ունեցել, որոյ ամենամաքուր ու ամենակատարեալ պատկերն է մեր Փրկիչն Յիսուս Քրիստոս, որ այնքան շատ ու մնացական բարիք արեց աշխար-

Հիտ: Նորան պակաս է եղել այն բարձր մտածմունքն ու զգացմունքն, որ սուրբ գիրքը պատուիրում է ունենալ Քրիստոսի ամեն մին խկական աշակերտին, ասելով թէ՛ Առաքելոյ ընտրածների, սուրբերի ու սիրելիների պէս հագէ՛ք ուրեմն գութը, ողորմութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեղութիւնն ու երկայնամութիւնը, մինը՝ միւսին ձեր մէջը ներելով, եթէ որ մինը եղորօր գէմը տրտունջ ունենայ, ինչպէս որ Քրիստոս ձեզներեց՝ այնպէս եւ դուք միմեանց (ներեցէք): Բայց ամենից աւելի հագէ՛ք սէրն, որ կատարելութեան կապն է ։

Արեւմտ ինքներս մեզ քնենք, իմանանք թէ՛ որ մենք լաւ չենք, վատ է մեր բանն, այդ վատութիւնն ինչիցն է: Եթէ որ մեր սրտի դառնութիւնը մեր մարմնի տկարութիւնիցն է, մեր ամենամեծ պարտականութիւնը պիտի լինի, որ ամեն կերպ հոգ տանենք մեր շատ աւերուած առողջութիւնը գտնելու, ձեռք բերելու: Պատճառ որ մեր՝ տխուր բաներ մտածող՝ ամեն մի բան մեզ նեղացնող, մեր համար ցաւ շինող մեր դրութիւնը՝ շատ կարելի է որ՝ կտանի մեզ այնպիսի՝ մեր կեանքը ցեցի պէս ուտող հիւանդութեան մէջ ձգի, որ մեր մահուանը պատճառ կլինի: Պէտք է անպատճառ, որ մի հմուտ բժիշկ հրաւիրենք, մեր սիրտը նորան բաց անենք, ու նորա մեզ տուած խորհուրդները լսենք ու կատարենք: Նա ահագամ ցաւի տիրացած մարդը չէ՝ ուղում այդ բանն անել նորա համար, որ իրան հիւանդի տեղ չէ դնում, առողջ է կարծում, եւ իւր նեղասիրտ, տխուր ու դժգոհ լինելը իրանից չէ տեսնում, այլ իրան մօտի մարդոց վատութիւնիցն: Այս արդէն լաւ նշան չէ: Այդ նշանները երեւել են առաջ այն մարդոց վրայ, որ յետոյ՝ քանի գնացել են, սկսել են ուժից ընկնել ու ընկնել, հալուել ու մաշուիլ, շատ անգամ եւս պատահել է, որ մի ծանր ու վատագաւոր հիւանդութիւն քաշելուց յետոյ, լաւի են գրել, էլի առաջուայ պէս սկսել են քիչ քիչ վրայ գալ, դորա համեմատ եւս՝ քանի գնալ՝ աւելի աւելի ուրախութիւն զգալ սրտի մէջ՝ մինչեւ որ դարձեալ առաջուայ ուրախ բնութեան ու սրտի տէր մարդն են դարձել, ու այդպէս՝ գնալով՝ գնալով՝ լաւացողներն իրանց հիւանդ միջոցին ունեցած տխուր, տրտնջող, դժգոհ, նեղասիրտ բնութիւնը թողել են, քաղցրալիզու, ծիծաղերես են եղել, ու ամենի հետ այնպէս կակուղ, այնպէս լաւ են վարուել, որ ամենի սիրտն եւս ուրախացել է:

կարծես թէ՛ բոլորովին նոր մարդ են դարձել, նոր աշխարհք ծնել:

Իսկ եթէ հասկացել ես արդէն, ու չես մոռացել որ շատ տարիներով յառաջ՝ դեռ քո փոքր եղած ժամանակդ՝ քո տարիքի ընկերներդ երեսիդ ասումէին, որ դու լաւ բնութիւն չունիս, վառօդի պէս խսկոյն կրակ ես առնում, կպչումես ու կրակում սւամ՝ հասնի, երբ հասնի, որտեղ հասնի, եթէ զգացել չես, որ քո մեծասրտութիւնիցն էր, որ ուրիշների վրայ ուղումէիր իշխանութիւն բանեցնես, ամեն տեղ, ամեն ժամանակ քո խօսքդ, քո ուղածդ յառաջ տանես, ու եթէ չէիր կարողանում, քո ցանկութիւններիդ՝ քո կարծիքներիդ ընդդէմ՝ խօսող էր լինում, սաստիկ նեղանումէիր, ցաւումէիր, եթէ այս ամենն զգացել, հասկացել ես — այ անբաղդ, այ քո գլխիդ թշնամի մարդ՝ շատ արա՛, ամենայն ջանք ու հնարք, բոլոր ունեցած խելքդ, հասկացողութիւնդ գործ գիր, որ քեզ բոլորովին փոխես, հոգում՝ մարմնով փոխուիս: Բայց լաւ իմացիր, որ քո պակասութիւնդ տակից՝ արմատից կտրել, հանելու համար շատ աշխատութիւն, շատ նեղութիւն պիտի քաշես. ինքդ քեզ հետ միշտ պիտի կռուի մէջ լինիս, որ կարողանաս քո ուղեցած լաւն անել տաս, իսկ բռնութեանդ մէջ ինչ որ վատն է, ինչ որ ատելի բանն է, քեզանից բոլորովին հեռացնես: Քո վատ սովորութեանդ, դու կկարծես, որ արդէն յաղթել, պրծել ես, բայց կտեսնես, որ էլի յայանուեց: Բայց՝ իմ պատուական բարեկամ, եթէ որ ազնիւ հոգի կայ քո մէջդ եւ ուղիդ սիրտ՝ եւ այդ հոգովդ որպէս եւ ուղիդ սրտովդ կսկսես բանդ՝ միանգամայն հաստատ հաւատով ու աներկմիտ յուսով, որ Աստուած քո երկնաւոր Հայրդ կ'յաջողի քո մտքումդ դրածն, այն ժամանակ իմացիր որ՝ անկարելի բան չէ, որ յաղթութիւնը քո կողմը լինի: Դեռ քեզ ի՞նչ եղաւ, որ բաղդաւոր լինելդ անկարելի լինի, կլինիս, կլինիս, դեռ ամեն յոյս կտրուած չէ: Ինչպէս զինուորն՝ քաջութիւնովն է յաղթութիւն անում ու աւարի տէր դառնում, այնպէս եւս դու քաջ զինուորի նման պատերազմի քո բնութեանդ, քո պակասութեանդ հետ ու ոտդ ամենեւին յետ մի դնիլ, հաստատ կանգնած մնայիր բացած կռուիդ մէջն, ու արած քաջութիւնովդ ձեռք բեր եւ ունեցիր այն քաղցր բնութիւնն, այն գութն, այն հեղութիւնն ու համբերութիւնը, տանելն ուրիշների պակասութիւններին, որոց մասին սուրբ Յիրքն

ասումէ, մանաւանդ՝ ինչ որ ամենից գլխաւորն է՝ ունեցիր այն տանող սիրտն, այսինքն է՝ այն՝ ամեն բանի տանող սէրն, այն սէրն որ ամենին ուրախացնելու յօժարամիտ է եւ որ ամենայն կատարելութեան կամին է:

Եթէ դու ուրիշին ատումես, ուրիշն եւս քեզ կատի. եթէ դու մարդոց արհամարհումես, քեզ եւս կարհամարհեն, հակառակ ես կենում նորանց, նորանք եւս քեզ հակառակ կկենան: Աւրեմն, եթէ որ քեզ համար թանգ արժի ուրախ կեանքն ու քո երկնաւոր Հօրդ օրհնութիւնն, քո պապասութիւնդ թող, էլ չտեսնուի վրադ, դու ուրիշներին սիրի՛ր՝ ամեն մարդ եւս քեզ կսիրի, ամեն մի մարդի, որ քեզ հետ տեսնվումէ, մի խօսք՝ մի գործ է ունենում, գոնէ մի լաւ, մի քաղցր խօսքով ուրախացնել ցանկացիր, որ նա քեզ հետ անցկացրած մի քանի բողէն իւր համար մի բազդաւորութիւն համարի, այդպէս որ վարուիս՝ խմացիր, որ ամեն մի մարդի սրտիցն այն անց կկենայ թէ՛ ինչպէս անէի, մի լաւ ժամանակ պատահեցնէի, ես եւս այդ հոգի մարդին այնպէս ուրախացնէի, որ իւր համար բազդաւորութիւն համարեր ինձ հետ տեսութիւն ունենային:

Իմ ջանքս եւս այդ լինի, այդ բանի քամակիցն ընկնեմ, որ ունենամ: Աուրբ Աստուած, որ օրհնութիւնդ ու յաջողութիւն տալիս ես ամեն բարի բանի համար, ինձ եւս զօրութիւն տո՛ւր, որ ինքս ինձ յազթեմ ու՝ սէր ունենալով սրտումս՝ յաջողութիւն գտնեմ ու ձեռք բերեմ ամենայն կատարելութեան կամն, որ քո առաջին գին ունի:

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.

